



Հասցե՝ ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
Էլ փոստ՝ info@sif.am
Հեռ.՝ (060) 654 013, (010) 52 15 94
Մամլո քարտուղար՝ Տաթևիկ Խաչատրյան
Հեռ.՝ (060) 654 011
Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ՝ Նոնա Սարգսյան
Հեռ.՝ (060) 654 020, (095) 51 14 17

Մամլո հաղորդագրություն

Շնորհակալագրերի հանձնում Սոցիալական ապահովության պետական ծառայությունում

ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Հովհաննես Սահակյանը նոյեմբերի 8-ին երկարամյա ծառայության և արգասաբեր աշխատանքի համար շնորհակալագրեր է հանձնել Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների տարիքային կենսաթոշակի անցած աշխատակիցներին:

Պարգևատրվողների ցանկում էին այն աշխատակիցները, ովքեր 2015, 2016 և 2017 թվականներին «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալու կապակցությամբ անցել են վաստակած հանգստի:

Սոցիալական ապահովության ծառայության պետի շնորհակալագրերին են արժանացել՝

1. Սպիտակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի առաջատար մասնագետ Գոհար Աֆրիկյանը
2. Ապարանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ Այա Ղազարյանը
3. ՍԱՊԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկող մասնագետ Նաթելլա Բաղդասարյանը
4. ՍԱՊԾ աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն աշխատակից Շողիկ Ավագյանը
5. Մալաթիա-Սեբաստիա սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատակից Հռիփսիմե Մկրտչյանը
6. Թումանյանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատակից Նվարդ Ծատինյանը
7. ՍԱՊԾ աշխատակազմի կենսաթոշակային ապահովության, նպաստների և դրամական այլ վճարների վարչության աշխատակից Օյա Ղազարյանը
8. Տրվում է ՀՀ ԱԱՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի Ֆինանսական բաժնի աշխատակից Մարգո Մուրադյանը
9. ՍԱՊԾ աշխատակազմի տնտեսագիտական բաժնի աշխատակից Գրիշա Հովհաննիսյանը
10. Գորիսի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատակից Սուդարիկ Ջհանգիրյանը
11. Սպիտակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի աշխատակից Նինա Ազիզյանը
12. ՍԱՊԾ աշխատակազմի կենսաթոշակային ապահովության, նպաստների և դրամական այլ վճարների վարչության կենսաթոշակային ապահովության բաժնի պետ Վաչագան Երիցյանը

Շնորհավորելով պարգևատրվածներին՝ Հովհաննես Սահակյանը բարձր է գնահատել տարիների ընթացքում նրանց անմնացորդ նվիրումը Ծառայության կայացման և զարգացման գործում: Ծառայության պետը պարգևատրվածներին մաղթել է քաջառողջություն, երկար տարիների կյանք և բարեկեցություն: